— Բացի հայհոյանքից ուրիշ ինչ կայ մեր թերթերում։

Սպանիչ ատաեստացիա է դա, որ պէտք է ցնցէ իւրաքանչիւր գրչի մարդուն։

Սակայն ամենքս գիտենք այդ և ոչ ոք չի ցնցուում։ Ամենքս տեսնում ենք այդ անբարոյականութիւնը և մատ մատի չենք խփում, չենք ջանում վերացնել այն, հեռացնել այն։

Բայց մինչև երբ, տէր Աստուած, մինչև երբ...

Կան բաղմաթիւ միջոցներ այդ ցաւի առաջն առնելու և թոյն ներուի մեզ, եթէ մենք մի շարք յօդուածներ նուիրենք այդ ցաւոտ խնդրին ու քիչ երկար կանգ առնենք այդ միջոցների վրայ։

Մոսկուա։ *Ն. Միւրդաշիւը*

ՀԱՒԱՏԱ՞ՆՔ ԱՐԴԵՕՔ

Հայ տառերի գիւտն անողը Ս. Էջմիածնի միաբան վարդապետ է եղել, որ յետոյ կաթողիկոս էլ դարձաւ։ Դա Մեսրոպ Մաշտոցն էր, որի աճիւնը Էջմիածնի կողքին (Օշականում) է գտնուում։ Ս. Մեսրոպին հովանաւորող, նրան պաշտպանող, նրա հետ աշխատող, թարգմանող և ուսուցանող է եղել Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ —Դա էլ Ս. Սահակն էր։

Այնուհետև թէ առաջին և թէ երկրորդ թարգմանիչները՝ բոլորն էլ Էջմիածնի սաներն ու միաբաններն են եղել։

Հայաստանի սահմաններից դուրս՝ Եւրոպայում՝ հայ տառերի փորագրիչներն ու տպագրիչները և հայ գրականութեան շարունակողներն ու ծաղկեցնողները դարձեալ Էջմիածնի միաբաններից մէկի՝ Մխիթարի շնորհիւն են առաջ եկել։

Այս այսպէս լինելով՝ շատ բնական է, որ հայ տառերի գիւտի և տպագրութեան յօբելեանը միմիայն Ս. Էջմիածնում կատարելը՝ մեր առաջին և սրբազան պարտականութիւնը պիտի լինի։ Եւ ամեն տեսակ հանդէսներ—լինեն նրանք *կրօնական* թէ պատմական—այնտեղ, և ոչ ուրիշ տեղ պիտի կատարուեն անշուշտ։

Նամանաւանդ որ Էջմիածինը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրաւունք ունին այդպիսի հանդէսների համար հրաւէր կարդալու և կատարելու։

Կրօնական հանդէս կատարել, ի հարկէ, չէ նշանակում «զաւանաբանական» խնդիրներ յայտուցանել։ Ո՛չ, ամենևին։ Այլ հայ տառերի և տպագրութեան գիւտն անող, հայ գրականութեան պահպանող ու ծաղկեցնող հայ եկեղեցու զաւակներին—Մայր Աթոռի հանդուցեալ միաբանների—յիշատակի համար, նրանց խօսած ու քարոզած լեզուով ու ծէսերով Աստծուն աղօթել, Իշման տեղում պատարագ մատուցանելով, պատշաճաւոր աղօթքներ և շարականներ կարդալով ու երգելով։

Ահա հանդիսի ամբողջ կրօնական մասը։—Ուրիշ ոչինչ։

Իսկ դա մի այնպիսի հանդէս է, որին կարող են իրենց ներկայութեամբ մասնակցել, — առանց իրենց կրօնային զգացումները մազի չափ վիրաւորած լինելու,— ոչ թէ միմիայն կաթոլիկ և բողոքական հայերը, այլ նաև ոչ-քրիստոնեայ հայեր, եթէ կան այդպիսիք. և նոյնիսկ հեթանոսներ ու այլազգիներ։

Այս այսպէս լինելով՝ ոչ միայն ցաւալի, այլ նաև *ամօթալի և դատապարտելի* պէտք է համարել «Մշակի» հրատարակած այն լուրը, իբր թէ Վիեննայի Մխիթարեանք չեն ուզում մասնակցել Ս. Էջմիածնում կայանալիք յօբելեանական հանդիսին։

Հաւատանք արդեօք։

Եղիշէ ա. ք. Դեղամեան

ԻՄ ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔԸ «ՄՇԱԿ»-Ի ՅՕԲԵԼԵԱՆԻՆ*)

IV

Վսեմից մինչև ծիծաղելին մի քայլ լինելն ասացուածքը՝ գուցէ ամենից աւելի է սազ գալիս «Մշակի» այդ յայտարարութեանը կամ յառաջաբանին, և նրան յաջորդող խմբագրականներին։

Մտաւորականների հետ կազմուած խմբագրութեան քայքայուելն, ինչ ասել կուզի, ցաւալի էր։ Բայց եղածն անցած պրծած էր։ Նամանաւանդ որ քայքայումը ուղղութեան, սկզբունքի հողի վրայ էր տեղի ունեցած։ Եւ ուրեմն՝ որոշ չափով օգտակար էր այդ բաժանումը և աւ դրդիչ առիթ էր հանդիսանում երկու կողմի համար էլ, որ նրանցից իւրաքանչիւրը աշխատի ապացուցանել իր ուղղութեան գերազանցութիւնը, առաւել օգտակար լինելը հասարակութեան համար։

Սակայն ի մեծ դժբաղդութիւն հայ հասարակութեան, ոչ Արծրունին, ոչ էլ նրա հակառակորդները այդպէս չըմբռնեցին իրենց դերը, իրենց կոչումը։ Եւ այդ անըմբռնողութիւնում պարագլուխ հանդիսացողը ազատամտութեան դրօշակը պարզող «Մշակն» եղաւ։

Գրիգոր Արծրունին չկարողացաւ արդեօք թէ չկամեցաւ դանազանել մասնաւորը՝ ընդհանուրից, անձնականը՝ հասարակականից, զգայնութիւնը՝ դատողութիւնից, սիրտը՝ ուղեղից, ինչպէս որ պատշաճ և վայելուչ կը լինէր մի փիլիսոփայութեան դոկտորի համար։

«Մշակի» սկզբնական առաջնորդողներից մի ամբողջ

---

*) Տպագրելով մեր մշտական աշխատակցի այդ վերտառութեամբ յօդուածների շարքը, նախապէս նշում ենք, որ նրա միքանի կէտերի հետ համաձայն չենք։ *Խմբ.*